

զի նոյն ժողովոյն անունն իրենց վրայ կը կրէին, ինչպէս ցարդ ամէն կանոններ ու նին իրենց հաստատողաց անունները, և ուրիշ գրիչներէ ալ նոյն անուններով կու չուեր են սովորաբար:

Յամենայն դէպս՝ բնաւ կասկած չկայ՝ որ քաղկեդոնեան կանոնը ընդունուած ու հայացած էին ազգէս՝ եկեղեցական բաժանումէն յառաջ, և անոցմէ առաւ Յախապատմի հեղինակը վանականաց վերաբերեալ յօդուածը: Ուրեմն և Քաղկեդոնի ժողովէն վերջ գրուեցաւ մատեանդ, նոյն ինքն Ե դարու երկրորդ կիսուն, ինչպէս ըսի, և կրտսեր թարգմանչաց միոյն ձեռքով, ցրտցնելով իւր մէջ՝ տակաւին ընդ-

հանրական Եկեղեցւոյ հետ հաղորդակից Հայութեան հոգեբանութիւնը, և նոյն շրջանին յատուկ վարդապետական սահմանները. ինչպէս՝ յետ մահու անմիջական հատուցմունք՝ ըստ իւրաքանչիւր արժանեաց (151), բարեաց վարձատրութիւն (128, 152, 248), չարերու պատուհաս (142), թեթեւամեղ հոգեոց քաւութիւն՝ նպաստներով (141), խոստովանութիւն մեղաց՝ յայտնութեամբ խղճի (63, 174) և այլն, որոց մէջ իրեն ձայնակից են Եդնիկ, Մանդակունին և ուրիշներ նոյն դարէն, որ և է տարակոյս չթողլով անոր Ե դարուն լինելու մասին:

Հ. Վ. ՀԱՅՈՒՆԻ

ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆՔ

ՂԱԶԱՐԱՅ ՓԱՐՊԵՑՈՒՅ ՀԱՅՈՅ ՊԱՏՄՈՒԹԵՆԷՆ՝



Ա.

Էջ 59. տող 26

«Չի թէպէտ մեղաւոր է, այլ զրոշմեալ է սուրբ աւագանին ծննդեամբ, հմուտ է փրկութեան խնդրոյն, լուեալ է զլուր քաւորութեան աւետարանին կենաց»:

Ուղղել ընդգծածն՝ խորհրդոյն.

Ս. Սահակ կը խօսի կրթով կուրացած նախարարներուն չմատնելու քրիստոնեայ թագաւորն ի ձեռս անօրինաց որք թըշնամի են քրիստոնէական կրօնքին և չեն տեղեակ տնօրինական կրից և փրկագործութեան խորհրդոյն, մինչ իրենց թագաւորն «հմուտ է փրկութեան խորհրդոյն». ուստի իրենց գործը, ոչ այլ ինչ պիտի

լինի եթէ ոչ «ի ծագը և ի ծանակ տալ զսուրբ խորհրդի հաւատոյս մերոյ»:

Բ.

Էջ 182. տող 12

«Բայց զմոգուցն բազմութիւն պահել առ օրն հրամայեցին զգուշութեամբ, և ի վաղիւն ի ծագել արեւուն արս ի նոցանէ րոտով սպանին սրով ի գիւղն որ կոչի Չարեհաւան»:

Թուի ուղղելի՝ Թուով մի միայն թուական գրով թ, որ է ինն:

1. Տգ. Վնեթիկ, Ս. Ղաթար, 1873.

Հայոց Նախարարներն ապստամբու-
թեան դրօշը բացած օրը կը ձեռնարկուին
եօթնարիւրի չափ մոգերն որք իրենց հետ
եկած էին և կը հրամայեն զգուշութեամբ
պահել, մի գուցէ խուժանն զամէնքն սա-
տակէ։ Երկրորդ օրը զխնուրական խոր-
հրդոյ վճռով ինն հոգի կը սպաննեն սրով,
անշուշտ ամենէն կատաղիներն որոնք կամ
մարդ սպաններ են և կամ եկեղեցի, սըր-
բատեղի պղծեր և աւերեր են։ Ղազար
Փարպեցի հայկական թի զրով նշանակած
է իննը թիւը, իսկ հետագայ տգէտ ընդո-
ւրինակողը զայն դարձուցեր է քուսով, որ
զուրկ է իմաստէ ճարտ ի նոցանէ թուով
սպանին սրով»։

Սպանման ժամն ալ խորհրդաւոր է.
Յազկերտ հրամայեց որ մեր նախարարները
արեւի ելած ժամանակ երկրպագեն, որով
ուրացութիւնն կը հաստատուէր. իրենք
ալ փոխադարձ զինն մոզներ սրէ կ'ան-
ցընեն արեւի ծագման ժամանակ, ցուցնե-
լով որ իրենց աստուծոյն կը զոհեն. յորմէ
իրենք հրաժարած են։

Գ.

էջ 262. տող 11

«Բայց զայս գիտե՛ա, զի յայսմ հետէ
Սիւնեաց տէր չեա, և զչարիսն ամենայն

զոր խորհեցար և կատարեցեր, կուտեսցի
ամենայն ի վերայ չար զլիւոյ քու Եւ-
զհարկեր զիմոյ աշխարհին Հայոց, և կամ
զՊարսկացն՝ զոր սպանեղև, և զկարասին
այնչափ՝ զոր հաներ, հրամայեցաք իւրն-
դրել ի տանն քումմէ և յորդուց քոց մին-
չեւ վճարեացի ամենայնն»։

Ուղղելի՛ զոր սպանեցերն կամ զոր ա-
պոկեցերն։

Անհաւատարմութեամբ և զողութեան
մէջ ամբաստանուած է Վասակ Յազկեր-
տի ատեանն, և յիրաւի զայն ապացու-
ցին նախարարքն Հայոց, որ տէրութեան
հարկերն և այլ կարասի յիրաւի և յա-
նիրաւի հաներ և տակոյնն ըրած էր, դրա
համար կ'առաջարկէի կարգալ «Եւ զհար-
կեր զիմոյ աշխարհին Հայոց — զոր ապ-
ոկեցերն»։ Զի ապուել բռնութեամբ և ուժով
հանել կողոպտել կը նշանակէ։

Հ. Գ. ՆԱՆԱԳԵՏԱՆ՝

1. Պարսք կը համարէնք ծանուցանել՝ թէ Յազկէի
Հայրը իր ձեռքը չունենալով Տփղիսի հրատարակու-
թիւնը, երկու սրամիտ և յաջող սրբազրութիւններ ալ
զրկած էր մեզի փարիզէն. փարպ. ապ. Վ. 556ա. էջ 107
ի բժամմաք՝ ուղղելի՛ ի բժամմաք. և ուրախութեամբ
ուղղելի՛ սխտորիւն, որոնք զանց քրինց զնէլ Հոս, քանի
որ արգէն կատարուած են Մկրտչեան — Մալխասեան
ապագութեան մէջ. Տփղիս 1904 էջ 39։

ԴՄԱՅՈՒ. ԽՄԲ.